http://cfoa.am

Համայնք-ՀԱՄԱՏԵՂ

http://celog.am

ՀԱՄԱՏԵՂ ծրագրի պաշտոնաթերթ Official Newspaper of CELoG program

Հրատարակվում է 2003 թվականից Հուլիս 2017, թիվ 7(107)

Խմբագրական

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈ՞ՒՄ, ԹԵ՞Ո ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՏԵՂԵՐՈՒՄ

Տեղական ինքնակառավարման պատմությունը բավական հարուստ է: Տարբեր ժամանակաշրջաններում տարբեր երկրներում համակարգը իր յուրահատկություններն ու առանձնահատկություններն է ունեցել: Նույն այդ պատմության ողջ ընթացքում կառավարման առումով մշտապես վիճելի հարց է եղել՝ տեղական ինքնակառավարո՞ւմ, թե՞ պետական կառավարում տեղերում (կամ որ նույնն է՝ տեղական կառավարում): Ըստ էության, այս հարցը արդիական է նաեւ այսօր՝ չնայած այն հանգամանքին, որ կառավարման ժողովրդավարական ուղին որդեգրած պետական համակարգերը հակված են դեպի տեղական ինքնակառավարումը:

Տեղական ինքնակառավարման եւ տեղերում պետական կառավարման հիմնական եւ սկզբունքային տարբերությունը իշխանության ծագման աղբյուրն է. առաջին դեպքում տեղական իշխանությունների ձեւավորման աղբյուր են ընտրությունները (ժողովրդավարության հաստատման բարձրագույն ձեւերից մեկը), երկրորդ դեպքում՝ պետության կողմից նշանակումը:

Ահա այս տարբերությունն է, որ արմատապես փոխում է կառավարման էությունն ու գործընթացները տեղերում: Մի դեպքում ունենք իշխանություն, որն ընտրվել է տեղի բնակիչների կողմից եւ հաշվետու է առաջին հերթին նրանց, մյուս դեպքում ունենք իշխանություն, որը նշանակվել է պետական կառավարման մարմինների կողմից եւ ամբողջությամբ ենթակա է կենտրոնական իշխանությանը:

Տեղերում կառավարման այս երկու մոդելների կամ դրանց համակցված ձեւերից որեւէ մեկի ընտրությունը կախված է տվյալ երկրի հասարակարգից, հանրային կառավարման ձեւից եւ զարգացման այն ուղուց, որն ընտրել է տվյալ երկրի ժողովուրդը:

Սակայն, կա մի շատ կարեւոր հարց, որը ծագում է վերը գրվածի համատեքստում. իրավունք ունի՞ արդյոք որեւէ կառավարման մարմին նախաձեռնել պաշտոնանկություն մեկ այլ մարմնի, որի իշխանության ծագման աղբյուրն ինքը չի հանդիսանում: Կամ ավելի կոնկրետ՝ իրավունք ունի՞ արդյոք պետական կառավարման մարմինը նախաձեռնել ՏԻՄ-երի պաշտոնանկություն եւ ի՞նչ հիմքերով:

Հանրային կառավարման միջազգային փորձը ցույց է տալիս, որ միայն իշխանության ծագման աղբյուրը կարող է նախաձեռնել պաշտոնանկությունը այն մարմնի, որին ինքն է «կյանք տվել»: Բնականաբար, այստեղ խոսքը կառավարման մարմինների քրեորեն պատժելի գործունեության մասին չէ, որի դեպքում արդեն երկրի դատական համակարգն է վճիռ կայացնում՝ տվյալ երկրի օրենսդրությանը համապատասխան:

Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման բնագավառի օրենսդրական դաշտը ավելի քան 20 տարիների ընթացքում ենթարկվել է տարաբնույթ համակարգային փոփոխությունների, ինչի վրա իրենց դրական ազդեցությունն են ունեցել նաեւ այն միջազգային իրավական ակտերը, որոնց միացել է Հայաստանը՝ վավերացնելով դրանք: Ժողովրդավարական կառավարման համակարգը, որը որդեգրել է մեր հանրապետությունը, հստակորեն կարգավորում է ՏԻՄ-երի տեղն ու դերը հանրային կառավարման համակարգում՝ վերջիններիս իշխանության ծագման աղբյուրը անվերապահորեն ամրագրելով համայնքի բնակիչներին եւ նրանց կողմից կատարված ընտրությանը:

Սակայն վերջին մեկ-երկու տարիների ընթացքում ՀՀ պետական լիազոր մարմինների կողմից պարբերաբար փորձեր են արվում ստեղծել օրենսդրական մեխանիզմներ, որոնք կուժեղացնեն պետական կառավարման մարմինների ճնշման լծակները ՏԻՄ-երի վրա՝ կենտրոնական եւ համայնքային իշխանությունների միջեւ ստեղծելով ենթակա-ստորադասի հարաբերություններ:

Վերջին այդպիսի քայլերից է ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության (ՏԿԶՆ) նախաձեռնությունը՝ օրենքով ստեղծելու մեխանիզմներ պետական կառավարման մարմինների կողմից համայնքի ղեկավարի նկատմամբ պաշտոնանկության գործընթաց սկսելու վերաբերյալ: Ընդ որում, հատկանշական են այն հիմքերը, որոնք ընկած են պաշտոնանկության գործընթացը նախաձեռնելու համար:

(Այդ հիմքերի վերլուծությունը կարող եք կարդալ թերթի 3-րդ էջում՝ «Ինչպես ՏԻՄ-երը դարձնել խորհրդային պետական մարմիններ»):

Առաջարկվող օրենսդրական փոփոխություններով կոպտորեն խախտվում են ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային փաստաթղթերով ու նորմերով սահմանված տեղական ինքնակառավարման ինքնուրույնության, ՏԻՄ-երի լիազորությունների ամբողջականության ու բացառիկության, նրանց գործունեության նկատմամբ իրավական եւ մասնագիտական հսկողության համաչափության, համայնքների բյուջեների ինքնուրույնության սկզբունքները, իսկ նմանատիպ օրենսդրական նախաձեռնությունների ընդունումը Հայաստանում ՏԻՄ-երին աստիճանաբար կվերածի խորհրդային ժամանակների պետական կառավարման տեղական մարմինների:

Մենք խորապես համոզված ենք, որ համայնքի ղեկավարի լիազորությունների դադարեցումը պետք է իրականացվի միայն դատական կարգով՝ համապատասխան հիմքերի առկայության դեպքում, երբ դատարանի կողմից կայացված վճռով վերջինիս գործունեությունը կճանաչվի հակաօրինական, իսկ կայացրած որոշումները՝ ՀՀ Սահմանադրությանն ու օրենսդրությանը հակասող:

Վ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՇԱՀԲԱՋՅԱՆ
Դ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Խմբագրական խորհրդի անդամներ

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԻՍՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ՝ ԳԱՂԱՓԱՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՀԵՏԵՎԻՑ ԳՆԱՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հուլիսի 11-ին, Թեքեյան կենտրոնում տեղի ունեցավ «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի (ՀՖՄ) 9-րդ համաժողովը, որին մասնակցում էին ՀՀ Տարածքային կառավարման եւ զարգացման (ՏԿԶՆ) առաջին փոխնախարար Վաչե Տերտերյանը, ՀՖՄ անդամներ, հյուրեր:

Ողջունելով ներկաներին, ՀՖՄ նախագահ Վահան Մովսիսյանը մասնավորապես նշեց. «20 տարի առաջ մի խումբ երիտասարդներ, որոնք այսօր այստեղ են, որոշեցին ստեղծել համայնքների ֆինանսիստների կազմակերպություն եւ որոշեցին նաեւ, որ այն կայանալու է: Չգիտեմ ուրիշներն ինչպես, բայց ես հավատում էի, որ կազմակերպությունը կկայանա:

Լուսանկարային ռեպորտաժը՝ 4-5:

էջ 2 ➔

ԻՆՉՊԵՍ ՏԻՄ-ԵՐԸ ԴԱՐՁՆԵԼ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

ՏԻՄ-երը, համաձայն ՀՀ օրենսդրության, առաջնային մանդատով օժտված պաշտոնյաներ են, որոնք ընտրվում են բնակիչների կողմից կայացած ուղղակի ընտրությունների արդյունքում (բացառությամբ Երեւան, Գյումրի եւ Վանաձոր համայնքների ղեկավարների): Այդպիսի մանդատով են օժտված նաեւ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորները եւ ՀՀ Նախագահը, որոնց լիազորությունների դադարեցման հիմքերը սահմանված են բացառապես ՀՀ Սահմանադրությամբ:

Հատկանշական է, որ ՀՀ կառավարության կողմից համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու դրույթը (ՀՀ սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա) ամրագրված էր դեռեւս չփոփոխված՝ 2005թ. Սահմանադրությամբ: Սակայն ՀՀ գործող Սահմանադրությունում համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու նախաձեռնության վերաբերյալ որեւէ դրույթ չկա:

ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության (ՏԿԶՆ) կողմից առաջարկվող փաթեթում նախատեսվում է համայնքի ղեկավարի պաշտոնանկության գործընթացի նախաձեռնություն՝ նորից ՀՀ Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա:

էջ 3 ➔

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԻՍՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ՝ ԳԱՂԱՓԱՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՀԵՏԵՎԻՑ ԳՆԱՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

← էջ 1

2018թ. լրանալու է ՀՖՄ գրանցման 20 ամյակը, եւ գալիք տարվա կոնֆերանսում դնելու ենք մեր կազմակերպության կայացման ամենամեծ կնիքը:

Մենք՝ ձեզ հետ միասին, կարողացանք ստեղծել մի կազմակերպություն, որը ոչ մեկինը չէ, այլ՝ բոլորինը: Ճիշտ է, հաճախ առաջին դեմքը կամ վարչության անդամներն ավելի շատ են երեւում ասպարեզում, բայց ոչ մեկը չի կարող ասել, որ ՀՖՄ-ն պատկանում է ինչ-որ մեկին, եւ դա մեր ամենամեծ հաջողությունն է:

Հաճախ ՀԿ-ներ ստեղծվում են դրամաշնորհ շահելու, ինչ-որ խնդիր լուծելու կամ մի գործ ստեղծելու համար, բայց մենք գաղափար ունենք, որի շուրջ համախմբվել ենք, որը միավորում է մեզ»:

Պարոն Մովսիսյանը ցավով խոսեց այդ գաղափարի նվիրյալներ, երջանկահիշատակ Մովսես Մովսիսյանի ու Դավիթ Թումանյանի մասին՝ կարեւորելով նրանց ունեցած ավանդը ՀՖՄ գործունեության ընթացքում: «Դ. Թումանյանն այն մարդն է, որը հղկել է մեր փորձագետներին եւ լինելով կազմակերպության հիմնադիր՝ եղել է մեր բոլորի ուսուցիչը»,- նշեց բանախոսը: Վերջինս հավելեց, որ այսօր շատ հարցեր քննարկելիս ՀՖՄ յուրաքանչյուր անդամ մտածում է՝ ինչպե՞ս կվարվեր պարոն Թումանյանը նման դեպքերում:

«Ես երջանիկ եմ, որ կարողացել ենք այս կառույցը ստեղծել ու պահել եւ երջանիկ եմ, որ ինձ բախտ է վիճակվել 19 տարի ղեկավարել այս կազմակերպությունը»,- ամփոփեց իր ելույթը ՀՖՄ ղեկավարը:

Տեղական ինքնակառավարման համակարգի կայացման ու զարգացման գործում ՀՖՄ դերն արժեւորեց ու բարձր գնահատեց նաեւ ՏԿԶ առաջին փոխնախարար Վ.Տերտերյանը:

«Ձեզ հետ հանդիպումներին ես միշտ ավելի հանգիստ եմ, որովհետեւ ձեզանից շատերի հետ գործնական հարթությունում մեր հարաբերությունները երկար տարիների պատմություն ունեն: Այս թիմի շատ անդամներ իրենց ակտիվ մասնակցությունն են ունեցել տարբեր տարիներին իրականացված բազմաթիվ գործընթացների: Համակարգային բոլոր գործընթացները եղել են ձեր կազմակերպության ու անդամների ուշադրության կենտրոնում, բայց թիրախային, մասնավորապես՝ ֆինանսական ապակենտրոնացման հարցերը մշտապես ու առավելապես են հետաքրքրել ձեզ:

Ձեր կազմակերպությունը շահեկանորեն բնութագրվում է իր համաչափ ու պրոֆեսիոնալ աշխատանքով: Այսօր կարող ենք փաստել, որ տեղական ինքնակառավարման ֆինանսական բլոկում ունենք ձեւավորված իրավական օրենսդրական դաշտ, ունենք ավանդույթներ, ունենք բարձրորակ մասնագետների թիմ, եւ այս ամենը գրավական է այն բանի, որ տեղի է ունենում տեղական ինքնակառավարման այնպիսի մի կարեւոր ինստիտուտի շարունակական զարգացում, ինչպիսին ֆինանսական կառավարումն է»,- ասաց Վ. Տերտերյանը:

Այս համատեքստում փոխնախարարը հիշատակեց ՀՖՄ փորձագետների կողմից մշակված «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքը: Վերջինս նշեց, որ դա ոչ միայն օրենք է, այլ նաեւ՝ մոտեցում, գաղափարախոսություն, որովհետեւ ՀՖՄ-ՏԿԶՆ տարիների համագործակցության, ինչպես նաեւ ՀՖՄ անդամների հետեւողական աշխատանքի արդյունքում տեղի է ունեցել մշակութային փոփոխություն, եւ անցում է կատարվել ավելի բազմագործոն, ավելի թիրախային գնահատման համակարգի:

ՀՀ գործադիր մարմնի ներկայացուցիչն անդրադարձավ նաեւ այսօր շարունակական բնույթ կրող վարչատարածքային բարեփոխումների գործընթացին, որին եւս ՀՖՄ-ն ակտիվ մասնակցություն ունի: «Ձեր կազմակերպությունը եղել է այս ռեֆորմի ակունքներում, հաշվի չառնելով հանրային, որոշակի առումով նաեւ մասնագիտական հանրույթի սկեպտիկ վերաբերմունքը ռեֆորմին, որովհետեւ չեք գնացել ավելի ականջահաճո կամ պոպուլիստական դիրքորոշման, այլ գնացել եք մասնագիտական կարծիքի հետեւից՝ կարեւորելով այն արժեքը, որ կառավարման համակարգում պետք է տեղի ունենան փոփոխություններ, իսկ փոփոխությունների ժամանակակից թրենդը կառավարման սուբյեկտների խոշորացումն է»,- իր ելույթում նշեց բանախոսը: Վերջինս հավելեց, որ «անելու շատ բան կա, եւ շատ լավ է, որ մենք պատրաստակամ ենք խնդիրները միասին լուծել, լսել նաեւ քննադատական մոտեցումներ, որովհետեւ դրանք էլ են օգնում ճիշտ որոշումներ կայացնել: ՀՖՄ-ն ռեալ կյանքով, ռեալ խնդիրներով ապրող ու աշխատող կառույց է»:

Փոխնախարարը հատուկ շեշտադրեց նաեւ ուսանողների, փորձագետների, ոլորտով հետաքրքրվող մարդկանց հետ՝ կազմակերպության ինտենսիվ ու ակտիվ շփումը, «որը ձեզ երկար տարիներ քայլելու հնարավորություն տվող էլեմենտներից մեկն է»:

Առաջնորդվելով օրակարգով, տեղի ունեցավ համաժողովի ղեկավար մարմինների՝ նախագահություն, քարտուղարություն, մանդատային եւ հաշվիչ հանձնաժողովի ձեւավորում: Այնուհետեւ ներկայացվեց հաշվետու ժամանակաշրջանում ՀՖՄ վարչության գործունեությունը, որն իրենից ներկայացնում էր ՀՖՄ բազմաբովանդակ ու լայնածավալ աշխատանքների ամփոփ պատկերը:

Ներկայացնելով ՀՖՄ վարչության հաշվետվությունը՝ կազմակերպության նախագահը շեշտադրեց հատկապես ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվող ՀամԱՏԵՂ ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները: Վերջինս նշեց. «Ծրագիրը մեզ հնարավորություն տվեց ավելի շատ ընդլայնվել, ավելի սերտ աշխատել համայնքների հետ, որի բաղադրիչները մեզ ավելի ճանաչելի դարձրին»: Որպես կարեւորագույն բաղադրիչ հիշատակվեց նաեւ «Համայնք-ՀամԱՏԵՂ» բազմատպաքանակ պաշտոնաթերթը, որն անդրադառնում է ՏԻ ոլորտին առնչվող մի շարք հարցերի եւ անվճար տրվում է բոլոր համայնքներին: Ծրագրի շրջանակներում ՀՖՄ փորձագիտական թիմի կողմից մշակվել է եւ շուտով կտպագրվի «Համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնության կազմակերպման եւ իրականացման» ուղեցույցը: Պատրաստ է նաեւ մոնիտորինգի զեկույցը, որը տարիներ շարունակ մշակել ու խմբագրել է Դ. Թումանյանը, իսկ ներկայումս այդ պատասխանատու գործը շարունակում է ՀՖՄ ավագ փորձագետ Վահրամ Շահբազյանը: Խոսելով այս զեկույցի մասին, պարոն Մովսիսյանը հպարտությամբ փաստեց, որ Արեւելյան գործընկերության շատ երկրներում չկա նման նախադեպ՝ ամեն տարի տպագրել ՏԻ տարեկան զեկույց: Նա ավելացրեց, որ ՀՖՄ փորձագիտական թիմի ջանքերով իրականություն դարձավ Դ. Թումանյանի երազանքը. շուտով կտպագրվի մոնիտորինգի նաեւ թվային գնահատման մեթոդաբանությունը:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՖՄ-ն սերտորեն համագործակցել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ), ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ինպես նաեւ «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպության հետ: ՀՖՄ նախագահը նշեց, որ այս համագործակցությունների արդյունքում իրենց կազմակերպության փորձագետներն աշխատել են նաեւ կրթության ոլորտում, մշակել են մի համակարգ, որի շնորհիվ կլուծվեն փոքր բնակավայրերի 10-ից պակաս մանկապարտեզի տարիք ունեցող երեխաների կրթության հարցերը:

Վ. Մովսիսյանն առաջարկեց նաեւ հատուկ ուշադրություն դարձնել ՀՖՄ-ին անդամակցության հարցի վրա. քանի որ «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում կատարված փոփոխություններից հետո այլեւս չկա իրավաբանական եւ ֆիզիկական անձանց միություն, ապա պետք է փորձել կազմակերպության շարքեր ներգրավել բոլոր համայնքներին, նրանց ֆինանսական ծառայությունները:

Վերոնշյալ օրենքի փոփոխություններով պայմանավորված՝ ՀՖՄ կանոնադրությունը եւս ենթարկվել է փոփոխությունների, որոնց մասին ներկաներին տեղեկացրեց ՀՖՄ նախագահի տեղակալ Աբրահամ Արտաշեսյանը: Փոփոխություններից մեկը վերաբերում է այն դրույթին, որ ՀԿ-ներն այսուհետ իրավունք ունեն զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ, իսկ մեկ այլ կետով հստակեցվել են կամավոր աշխատանքի սկզբունքները: Կանոնադրությունում ավելացվել է մեկ կետ, որը վերաբերում է կազմակերպության անդամների կողմից տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում մոնիտորինգի իրականացմանը, իսկ մեկ այլ փոփոխություն էլ առնչվում է ՀՖՄ անդամակցությանը (այս մասին առավել մանրամասն ներկայացվել է թերթի նախորդ համարում):

Համաժողովի ընթացքում ներկայացվեց նաեւ կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը, ընդունվեց որոշում ՀՖՄ անդամակցության եւ անդամավճարի չափը վերասահմանելու մասին, ինչպես նաեւ տեղի ունեցավ ՀՖՄ նախագահի, վարչության եւ վերստուգիչ հանձնաժողովի անդամների ընտրություն:

ՀՖՄ վարչության անդամներ ընտրվեցին՝ Վահրամ Շահբազյանը, Նորա Ղուկասյանը, Աբրահամ Արտաշեսյանը, Սեյրան Մարկոսյանը, Տիգրան Բրսիկյանը, Գոհար Դավթյանը, Կարեն Հովհաննեսյանը, Լեւոն Թումանյանը, Ռուբեն Հայրապետյանը, Դավիթ Մարգարյանը, Քնարիկ Այվազովան, Արծրունի Իգիթյանը, Աննա Չոբանյանը եւ Ալիսա Միրումյանը, վերստուգիչ հանձնաժողովի անդամներ՝ Խաչատուր Թումանյանը, Անահիտ Մարգարյանը եւ Աիդա Մովսիսյանը:

Փակ գաղտնի քվեարկության արդյունքներով, կազմակերպության նախագահ վերընտրվեց առաջադրված միակ թեկնածուն՝ Վահան Մովսիսյանը, որը շնորհակալությամբ ստանձնեց արդեն 19 տարի իրեն վստահվող այս պատասխանատու պաշտոնը:

ՀԱՍՄԻԿ ՔԵՐՈԲՅԱՆ

«ՀՖՄ-Ն ՄԻՇՏ ԵՂԵԼ Է ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿՈՂՔԻՆ»

Ժիրայր Ղազարյան

Լոռու մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման եւ հանրապետական գործադիր մարմինների հետ հարցերով վարչության տեղական ինքնակառավարման եւ համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ

«Տարիների ընթացքում ՀՖՄ-ն ապացուցեց, որ ինքը ՏԻ համակարգում ունի ինքնուրույն ձեռագիր: Կյանքը ցույց տվեց, որ այս կազմակերպության կողմից մշակված օրենսդրական նախաձեռնությունները, ինչպես նաեւ այս կամ այն օրենքի նախագծի վերաբերյալ արտահայտած փորձագիտական կարծիքներն ավելի ճիշտ էին ու իրատեսական: Մասնավորապես ուզում եմ հիշատակել տարիներ առաջ ՀՖՄ կողմից մշակված «Ֆինանսական համահարթեցման մասին» օրենքը, որը միայն վերջերս օրենքի ուժ ստացավ: Եվ ողջունելի է, որ կազմակերպությունը կարողացավ հաղթահարել այսպիսի փորձություն, եւ վստահ եմ, որ երբ այս օրենքը լիարժեք գործի, կբերի համայնքների համաչափ զարգացմանը եւ կնպաստի ՏԻ ավելի արդյունավետ կայացմանը:

ՀՖՄ-ն միշտ աջակցում է մեր մարզի համայնքներին մասնագիտական խորհրդատվական հարցերով, եւ սա շատ ողջունելի է ու գնահատելի, որովհետեւ զուտ մասնագիտական առումով այսօր չունենք այլ ՀԿ-ներ, որ այսպիսի ծանրակշիռ ներդրում ունենան համայնքային զարգացման հարցերում: Համայնքների ղեկավարները եւս բարձր են գնահատում ՀՖՄ աջակցությունը, կարեւորելով այն հանգամանքը, որ մասնագիտական թիմի անդամները տիրապետում են իրավիճակին եւ միշտ պատրաստակամորեն օգնում են ու աջակցում»:

Սեյրան Մարկոսյան

ՀՖՄ վարչության անդամ

«Այսօր Հայաստանում գործող ու կայացած ՀԿ-ների շարքում ՀՖՄ-ն հաստատապես առաջիններից մեկն է, որովհետեւ մեծ գործունեություն է ծավալել, մեծ աշխատանք է կատարել ՏԻ կայացման գործում: Կարեւոր է շեշտադրել այն հանգամանքը, որ ֆինանսական բլոկից զատ, կազմակերպությունն այսօր հմտորեն աշխատում է նաեւ այլ ոլորտներում եւս, որովհետեւ ունի լավ, պատրաստված մասնագետներ:

Գաղտնիք չէ, որ պետական գերատեսչություններն այսօր մեր կարծիքն են հարցնում, մեր կազմակերպության հետ հաշվի են նստում, իսկ սա գալիս է ՀՖՄ արդյունավետ ու նպատակային աշխատանքից»:

Արծրունի Իգիթյան

Ախուրյան համայնքի ղեկավար
ՀՖՄ վարչության անդամ



«ՀՖՄ-ի հետ սկսել եմ համագործակցել դեռեւս տեղական ինքնակառավարման մարմինների ձեւավորման տարիներից, եւ այն փաստը, որ մինչեւ օրս շարունակում եմ անդամակցել այս կազմակերպությանը, գալիս է ապացուցելու, որ կառույցը կարեւորագույն դեր ու նշանակություն ունի ՏԻ համակարգում: Ասեմ ավելին՝ ՀՖՄ-ին անդամակցում է մեր համայնքը եւս, նաեւ համայնքապետարանի հաշվապահը:

Պարբերաբար եղել եմ ՀՖՄ վարչության անդամ, ակտիվորեն մասնակցել կազմակերպության գործունեությանը, օրենսդրական նախաձեռնությունների մշակման գործընթացին:

Եվ որպես ՏԻ ոլորտի ներկայացուցիչ՝ համայնքի ղեկավար, անգնահատելի եմ համարում մեր համակարգում ՀՖՄ-ի ունեցած ներդրումն ու աշխատանքը, առավել եւս օրենսդրական դաշտում ակտիվ մասնակցությունը: ՀՖՄ-ն միշտ եղել է համայնքների կողքին, աշխատել նրանց բարօրության համար»:

Աննա Չոբանյան

Աբովյանի քաղաքապետարանի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի տեղակալ
ՀՖՄ վարչության անդամ

«Համայնքների եւ ՀՖՄ համագործակցությունն, իմ կարծիքով, բավական արդյունավետ է եւ երբ չգիտես՝ որտեղից ստանալ ոլորտին վերաբերող այս կամ այն հարցի պատասխանը, կազմակերպության փորձագետները միշտ պատրաստակամորեն օգնում են:

Արդեն երրորդ անգամ ընտրվեցի ՀՖՄ վարչության կազմում, որի համար շնորհակալ եմ եւ ուրախ: Իմ անդամակցությունն այս կազմակերպությանը դրականորեն է անդրադառնում նաեւ աշխատանքի վրա, որովհետեւ կազմակերպությունում ծանոթանալով օրենսդրական փոփոխություններին, նախաձեռնություններին՝ աշխատավայրում ավելի արագ ու հեշտ եմ կողմնորոշվում:

Գոհար Դավթյան

Դիլիջանի քաղաքապետարանի ֆինանսական բաժնի պետ
ՀՖՄ վարչության անդամ

«Շատ կարեւորում եմ ՀՖՄ գործունեությունը, նրա ունեցած դերակատարումը ՏԻ ոլորտում:

ՀՖՄ փորձագիտական թիմը կարծես մեր փրկության օղակը լինի. ցանկացած պահի կարող ենք դիմել համակարգին առնչվող հարցերով ու ստանալ սպառիչ պատասխան: Սա, անշուշտ, շատ ողջունելի է ու գնահատելի»:

Հ. ՔԵՐՈԲՅԱՆ

← էջ 1

ԻՆՉՊԵՍ ՏԻՄ-ԵՐԸ ԴԱՐՁՆԵԼ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Սակայն ՀՀ Սահմանադրության 167-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված է, որ Սահմանադրական դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ, ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածում սահմանված են Սահմանադրական դատարանի լիազորությունները, որտեղ համայնքի ղեկավարի պաշտոնանկության վերաբերյալ եզրակացություն տալու լիազորություն չկա: Հետեւաբար, ՀՀ Սահմանադրական դատարանը համայնքի ղեկավարի լիազորությունների դադարեցման կամ նրան պաշտոնանկ անելու վերաբերյալ եզրակացություն տալու սահմանադրական իրավունք չունի: Ներկայացված փաթեթի հաջորդ դրույթները վերաբերում են համայնքի ղեկավարի պաշտոնանկության վերաբերյալ առաջարկություն ներկայացնող մարմիններին եւ այդ գործընթացի կանոնակարգմանը:

Առանձին դիտարկման են արժանի օրենսդրական փոփոխությունների նախագծերով առաջարկվող՝ համայնքի ղեկավարի պաշտոնանկությունը նախաձեռնելու հիմքերը՝

ա) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշումները՝ անվավեր ճանաչելու համայնքի ղեկավարի՝ ՀՀ օրենսդրությանը հակասող երկու եւ ավելի որոշումները:

Որպես օրինակ, հիշենք ՀՀ վարչական դատարանի կայացրած բազմաթիվ որոշումները Երեւան քաղաքում ավտոկայանատեղերի («կարմիր գծերի») հետ կապված Երեւան համայնքի ղեկավարի կայացրած որոշումները անվավեր ճանաչելու վերաբերյալ: Արդյո՞ք սա պետք է բավարար հիմք համարել Երեւանի քաղաքապետի պաշտոնանկության նախաձեռնության համար:

բ) Համայնքի ղեկավարի կողմից «հարկային եկամուտները, տեղական տուրքերը եւ վճարները հարյուր տոկոսով չհավաքագրելու դեպքը:

Արդյո՞ք համայնքի ղեկավարի կողմից համայնքի բյուջեում պլանավորված հարկային եկամուտների, տեղական տուրքերի եւ վճարների 1-2% չհավաքագրումը համաչափ է այն հանրային շահի պաշտպանությանը, ինչը հիմք ընդունելով կարելի է սկսել համայնքի ղեկավարի պաշտոնանկության գործընթաց: Ավելին, տեղական հարկերը ինքնահարկվող են եւ հարկատուները հաճախ հարկերի վճարման ուշացումները գիտակցաբար փոխհատուցում են տույժերի եւ տուգանքների տեսքով:

Նախագծում նշված այս հիմքը պարունակում է համայնքի կառավարման լրջագույն ռիսկեր, ինչպիսիք են բյուջեի եկամուտների կանխամտածված թերպլանավորումը եւ հաշվետու տարվա ընթացքում բյուջեի սեփական եկամուտների պլանային ցուցանիշների ճշգրտումը՝ վերջիններս համապատասխանեցնելով դրանց գանձման փաստացի իրավիճակին: Չպետք է մոռանալ նաեւ, որ բյուջեի պլանավորված եկամուտները հավաքագրելը ենթադրում է նաեւ այդ գծով վարչական եւ դատական վարույթների իրականացում, ուստի տարեվերջին հնարավոր է նաեւ պլանավորված եկամուտների մասնակի չհավաքագրում՝ դատական եւ վարչական վարույթներում գտնվող գործերի մասով:

գ) Համայնքի ղեկավարի կողմից «համայնքի բյուջեի կատարումը չապահովելն է»:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 15-րդ եւ 33-րդ հոդվածները հստակորեն սահմանում են, թե ինչ է նշանակում բյուջեի կատարումը եւ թե ինչ առանձնահատկություններ ունի այն: Ըստ օրենքի՝ բյուջեի կատարումը մուտքերի ձեւավորման եւ ելքերի իրականացման կանոնակարգված գործունեությունն է: Ստացվում է, որ համայնքի ղեկավարի պաշտոնանկության գործընթաց կարելի է սկսել վարչական գործառույթները պատշաճ չկատարելու համար: Եթե օրենքի փոփոխությունը նպատակ ունի բարելավելու բյուջեի կատարման արդյունավետությունը, ապա բյուջեի կատարման եռամսյակային հաղորդումները, եւ՛ համայնքի ավագանուն, եւ՛ մարզպետարանին ներկայացնելը արդյո՞ք բավարար չեն, որպեսզի տարվա ընթացքում շտկվի կամ կարգավորվի «անարդյունավետ» բյուջետավարումը:

դ) Համայնքի ղեկավարի կողմից «հաշվետու տարում համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացումը չապահովելը»:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրն, ըստ էության, տվյալ համայնքի ղեկավարի քաղաքական ծրագիրն է, եւ վերջինս չիրականացնելու դեպքում համայնքի ղեկավարը պատասխանատու է առաջին հերթին համայնքի բնակիչների՝ իր ընտրողների առջեւ եւ ոչ թե՝ պետական կառավարման մարմինների: Հարց է ծագում, թե քաղաքական եւ իրավական ո՞ր հիմքի վրա պետական կառավարման մարմինը պետք է իրավունք ունենա համայնքի ղեկավարի պաշտոնանկության գործընթաց սկսել՝ հիմնվելով այդ ծրագիրը տարեկան կտրվածքով չիրականացնելու վրա: Համայնքի ավագանու բացառիկ իրավասությունն է՝ քննարկել եւ հաստատել համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը եւ դրանում առաջարկվող փոփոխությունները, ինչպես նաեւ դրա իրականացման հաշվետվությունները՝ տարեկան եւ հնգամյա կտրվածքով: Հետեւաբար, հենց համայնքի ավագանին էլ պետք է իր վերաբերմունքն արտահայտի այդ ծրագրի ամբողջական կամ տարեկան կատարողականի նկատմամբ, ընդհուպ մինչեւ համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու նախաձեռնությունը:

Վ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՇԱՀԲԱՁՅԱՆ
Դ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Խմբագրական խորհրդի անդամներ

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԻՍՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ.

Հայաստանի տարբեր մարզերից ժամանած ՀՖՄ անդամները համաժողովից առաջ հասցրին շփվել եւ զրուցել պատշգամբում....

....եւ դահլիճում:

Համաժողովի մասնակիցները գրանցվում են:

Նշանակված ժամին քվորումն էլ ապահովված է:

ՀՖՄ նախագահ Վահան Մովսիսյան. «Երջանիկ եմ, որ կարողացել ենք այս կառույցը ստեղծել ու պահել»:

ՀՀ Տարածքային կառավարման եւ զարգացման առաջին փոխնախարար Վաչե Տերտերյան. «ՀՖՄ-ն շահեկանորեն բնութագրվում է իր համաչափ ու պրոֆեսիոնալ աշխատանքով»:

ՀՖՄ նախագահի տեղակալ Աբրահամ Արտաշեսյանը ներկայացնում է ՀՖՄ կանոնադրության փոփոխությունները:

Հարցի քվեարկությունն անցավ միաձայն:

ՀՖՄ վարչության անդամ Սեյրան Մարկոսյան

ՀՖՄ վերստուգիչ հանձնաժողովի անդամ Խաչատուր Թումանյանը ներկայացնում է հանձնաժողովի հաշվետվությունը:

Փոխնախարար Վաչե Տերտերյան. «Զեզանից շատերի հետ գործնական հարթությունում մեր հարաբերությունները երկար տարիների պատմություն ունեն»:

9-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Համաժողովի մասնակիցները ծանոթանում են վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությանը:

Քվեարկում է ՀՖՄ վարչության անդամ Քնարիկ Այվազովան:

ՀՖՄ վարչության անդամ, փորձագիտական թիմի ղեկավար Վահրամ Շահբազյանը:

ՀՖՄ նախագահ Վահան Մովսիսյանը քվեարկության ժամանակ:

Մինչ հաշվիչ հանձնաժողովն իր գործն է անում, ՀՖՄ անդամները քննարկում են ...

... պատմում իրենց հոգսերից ...

... փաստաթղթեր ուսումնասիրում...

... լուսանկարվում ...

... գեղեցկացնում ՀՖՄ ֆոտոալբոմը:

Հաշվիչ հանձնաժողովն ավարտում է լարված աշխատանքը:

Էջը պատրաստեց Ա. Գրիգորյանը

ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՀԱՄԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ-ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԱԳԵՏ-ՀՀ ՓՈԽՆԱԽԱՐԱՐ ՁԵՎԱՉԱՓՈՎ

Ինչպես եւ նախատեսված էր երրորդ տարվա աշխատանքային պլանով, հուլիսի 18-21-ը Հայաստանում էր ՀԱՄԱՏԵՂ ծրագրի միջազգային փորձագետ, Լեհաստանի նախագահի խորհրդական, Եվրոպայի խորհրդի ֆինանսական եւ տարածքային հարցերով փորձագետ Պավել Սվիանեւիչը: Հուլիսի 19-ին Համայնքների ֆինանսիստների միավորման գրասենյակում տեղի ունեցավ հանդիպում ՀԱՄԱՏԵՂ համընկերության անդամ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Եթե անցյալ տարի փետրվարին կատարած այցելության նպատակը տեղական ինքնակառավարման ընթացիկ բարեփոխումներին ծանոթանալը եւ այդ բարեփոխումների համատեքստում միջազգային լավագույն փորձը ներկայացնելն էր, ապա այս անգամ փորձագետն ավելի շատ ինքը վերլուծեց մեր երկրում տեղական ինքնակառավարման ոլորտի բարեփոխումների ընթացքը: Մինչեւ այդ, սակայն, համընկերության անդամ կազմակերպության յուրաքանչյուր ներկայացուցիչ լեհ գործընկերոջը պատմեց ՀԱՄԱՏԵՂ ծրագրում իր կազմակերպության առաքելության եւ դերի մասին, ներկայացրեց այն գործողություններն ու միջոցառումները, որոնք ծրագրի շրջանակներում արդեն իսկ իրականացվել են, դրանց արդյունքների եւ հետագա անելիքների մասին:

Պ. Սվիանեւիչը ՀԱՄԱՏԵՂ-ի իր գործընկերների հետ բավական անմիջական եւ հանգամանալից խոսեց այն թերությունների եւ առավելությունների մասին, որոնցով ընթանում են բարեփոխումները Հայաստանում, ներկայացրեց այն հնարավոր լուծումները, որոնց միջոցով կարելի է առավել արդյունավետ իրականացնել դրանք:

Հայաստանյան փորձագետները հնարավորություն ունեցան տալու իրենց հետաքրքրող հարցերը եւ ստանալու դրանց պատասխանները: Ընդ որում՝ ոչ միայն լեհ փորձագետից, այլ նաեւ՝ ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարի առաջին տեղակալ Վաչէ Տերտերյանից: Բանն այն է, որ փոխնախարարի հանդիպումը միջազգային փորձագետի հետ թեեւ նախատեսված էր առանձին ՀԱՄԱՏԵՂ-ի հանդիպումից անմիջապես հետո, սակայն հետաքրքրությունների եւ մտահոգությունների ընդհանրությունը ստիպեց բոլոր ներկաներին շարունակել քննարկումն արդեն վերջինիս հետ միասին: Արդյունքում տեղի ունեցավ շատ ավելի բազմակողմանի եւ հանգամանալից քննարկում:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Պավել Սվիանեւիչը զգալի փորձ ունի տեղական ինքնակառավարման, ֆինանսական քաղաքականության, կառավարմանը համայնքների ներգրավման, տարածքային եւ ապակենտրոնացմանն ուղղված բարեփոխումների եւ միջհամայնքային համագործակցության ոլորտներում: 2006 թվականից աշխատում է Վարշավայի համալսարանում՝ որպես Աշխարհագրության ֆակուլտետի Տեղական ինքնակառավարման քաղաքականության եւ զարգացման ամբիոնի ղեկավար, իսկ 2010-ից՝ որպես Լեհաստանի նախագահի խորհրդական:

Պավել Սվիանեւիչը Եվրոպայի խորհրդի՝ ֆինանսական եւ տարածքային հարցերով փորձագետ է: Նախկինում եղել է Բրիտանիայի կառավարության միջազգային զարգացման բաժնի՝ Ուկրաինայում իրականացվող ֆինանսական ապակենտրոնացման ծրագրի փորձագետ, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի՝ տարածքային կառավարման հարցերով փորձագետ Ալբանիայում, Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում, Թուրքմենստանում եւ Մակեդոնիայում:

Տեղական կառավարման, ժողովրդավարության, ֆինանսների, ապակենտրոնացման եւ Արեւելյան ու Կենտրոնական Եվրոպայում անցումային շրջանի վերաբերյալ տասնյակ գրքերի եւ հոդվածների հեղինակ է:

ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԻ 2016-2017ԹԹ. ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ

Արդեն երրորդ անգամ ՀԱՄԱՏԵՂ ծրագրի մրցանակն են ստանում հայաստանյան այն լրագրողներն ու լրատվամիջոցները, որոնք անցնող տարվա ընթացքում աչքի են ընկել տեղական ինքնակառավարման խնդիրների լուսաբանման ակտիվությամբ, այդ թեման հնարավորինս «բացելով» իրենց ընթերցողների համար եւ դրանով նպաստելով, ցավոք, ավանդաբար ոչ պոպուլյար համարվող այս թեմայի շուրջ՝ լսարանի իրազեկվածության բարձրացմանը:

2017թ. հուլիսի 18-ին «Կոնգրես» հյուրանոցում տեղի ունեցավ Երեւանի մամուլի ակումբի 22-րդ տարեդարձին նվիրված արարողությունը, որի ժամանակ հանձնվեցին ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ եւ Համայնքների ֆինանսիստների միավորման հետ համագործակցությամբ իրականացվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀԱՄԱՏԵՂ) ծրագրի, ինչպես նաեւ՝ ԵՄԱ ամենամյա մրցանակները:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ գոյատեւման եւ զարգացման շատ ավելի դժվար պայմաններում են մարզային լրատվամիջոցները, այս տարի մրցույթի ժյուրին հատկապես ուրախ էր՝ առանձնացնելու Ալավերդու «Անկյուն գումարած 3» հեռուստաընկերությունը: Հենց վերջինը համայնքային եւ տեղական ինքնակառավարման համակարգի խնդիրները հետեւողականորեն լուսաբանելու համար ՀԱՄԱՏԵՂ ծրագրի շրջանակներում արժանացավ Երեւանի մամուլի ակումբի եւ Համայնքների ֆինանսիստների միավորման մրցանակին:

Մրցանակը հանձնեց Համայնքների ֆինանսիստների միավորման նախագահ Վահան Մովսիսյանը: Վերջինս, շնորհավորելով հեռուստաընկերության ներկայացուցիչ Անժելա Մամաջանյանին, իր խոսքում կարեւորեց լրատվամիջոցների դերը տեղական ինքնակառավարման ոլորտի բարեփոխումների իրականացման հարցում, ինչպես նաեւ մաղթեց առավել արդյունավետ աշխատանք, ինչը կնպաստի տեղական ինքնակառավարմանը հանրային մասնակցայնության աստիճանական բարելավմանը:

Իսկ տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումների թեմային հավատարմության համար մրցանակին արժանացավ «Հետք» առցանց պարբերականի թղթակից Երանուհի Սողոյանը: Վերջինիս քննադատական հոդվածները ոլորտի բարեփոխումների ընթացքից գրեթե բոլոր խոշորացվող փնջերից էականորեն նպաստում են դրանց շուրջ հանրային իրազեկվածության բարձրացմանը եւ ծագող հիմնախնդիրների վերհանմանը:

Ե. Սողոյանին մրցանակը հանձնեց «Համայնք-ՀԱՄԱՏԵՂ» թերթի խմբագիր Արեւհատ Գրիգորյանը:

ՍԵՂԱ ՇԻԳԱՆՅԱՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՎԱՅՐ ՀԱՄԱՅՆՔԸ ԽՈՇՈՐԱՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ

2016թ. փետրվարի 14-ին կայացած ՏԻՄ ընտրությունների արդյունքում ձեւավորված երեք բազմաբնակավայր համայնքներից մեկը Թումանյանն է: Համայնքի կազմում ընդգրկվեցին մեկ քաղաքային եւ վեց գյուղական բնակավայրեր: Թումանյան բազմաբնակավայրի ներկայի եւ առաջիկա ծրագրերի մասին «Համայնք-ՀամաՏեղը» զրուցեց համայնքապետ Լեւոն Զավարյանի հետ:

- Պարոն Զավարյան, արդեն մեկուկես տարի է, ինչ ձեւավորվել է Թումանյան բազմաբնակավայր համայնքը: Ի՞նչ եք հասցրել անել այս ժամանակաընթացքում:

- Մեկուկես տարին այնքան էլ մեծ ժամանակ չէ նոր կազմավորված բազմաբնակավայր, բազմահոգս համայնքի համար, բայց մի շարք ծրագրեր արդեն հասցրել ենք իրականացնել: Մեր գործունեության ընթացքում մինչեւ այսօր առաջնորդվել ենք եւ առաջիկա մի քանի տարիներին եւս առաջնորդվելու ենք համայնքի զարգացման հնգամյա ծրագրով, որը կազմվել եւ մշակվել է բազմաթիվ քննարկումների արդյունքում. հանդիպել ենք բոլոր բնակավայրերի բնակիչների հետ, լսել նրանց բարձրացրած խնդիրները, որոնք ըստ առաջնահերթության ներառվել են մեր ծրագրում:

2016թ. վերանորոգել ենք Լորուտի մանկապարտեզն ու Շահմուտի հանդիսությունների սրահը, իսկ Աթանում եւ Մարցում իրականացվել են ջրագծի վերանորոգման աշխատանքներ, բարեկարգվել են Ահնիձորի եւ մյուս բնակավայրերի՝ դեպի սարեր տանող ճանապարհները: Նախորդ տարվա ընթացքում մեր առաջնային քայլերից մեկը եղավ նաեւ Քարինջի հրապարակի բարեկարգումը, տեղադրվեցին բնակավայրի երկու հերոսների կիսանդրիները, որոնք հայտնի չէ՝ թե որքան ժամանակ դրված էին մի պատի տակ:

Այս տարվա ընթացքում արդեն մեկնարկել եւ ընթացքի մեջ են Քարինջի ջրագծի վերանորոգման աշխատանքները, իսկ Լորուտում դրանք արդեն ավարտվել են: Շուտով կավարտվի նաեւ Մարցի համայնքային կենտրոնի բարեկարգումը եւս:

2017թ. ընթացքում բավական մեծ ծրագիր է իրականացվելու Աթան բնակավայրում. վերանորոգվելու է նախկին մանկապարտեզի շենքը, որը չի գործել, եւ այստեղ լինելու է հանդիսությունների սրահ, նախակրթարան, վարչական ղեկավարի նստավայր եւ բուժկետ, որի վերանորոգման համար գումարը հատկացվել է Լոռու մարզպետարանի կողմից, իսկ նախակրթարանի բարեկարգմանը աջակցելու են Հայաստանի մանուկների հիմնադրամը եւ «Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամը:

Ի թիվս մի քանի այլ ծրագրերի, առաջիկայում բոլոր բնակավայրերի համար նախատեսում ենք նաեւ կանգառների կառուցում, լուսավորության անցկացում, քանի որ այսօր միայն Թումանյանում եւ Մարցում կա գիշերային լուսավորություն:

Համայնքի համար կարեւոր ձեռքբերում է ԱՄՆ ՄԶԳ կողմից, որպես խոշորացված համայնքի, մեզ տրամադրված տեխնիկան, որի անհրաժեշտությունը մեծ է բոլոր բնակավայրերում:

Տարիներ շարունակ այս բնակավայրերում գրեթե ոչինչ չի արվել, ու այսօր իրար հետեւից իրականացվում են մի քանի ծրագրեր: Սա, բնականաբար, համայնքների միավորման արդյունքում մեկտեղված բյուջեի շնորհիվ է, քանզի հիմնականում աշխատանքներն իրականացվում են համայնքային միջոցներով: Ավելին, փորձում ենք բոլոր բնակավայրերում հավասարաչափ ներդրումներ կատարել, որպեսզի բնակիչները չմտածեն, թե տարբերակում է դրվում այս կամ այն բնակավայրի միջեւ:

Փորձում ենք կամաց-կամաց հաղթահարել դժվարությունները. մի քանի տարի անց, բոլոր նրանք, ովքեր քարկոծում էին համայնքների միավորման գործընթացը, ընդունելու են, որ սխալվել են:



- Ինչպիսի՞ դժվարությունների եք հանդիպում:

- Դժվարություններ շատ կան: Ի սկզբանե բնակիչները վատ էին տրամադրված համայնքների միավորման հարցին, եւ սա բնական էր, որովհետեւ փորձ չկար, մարդիկ չէին պատկերացնում, թե ինչ է իրենց սպասում: Կար ինֆորմացիայի պակաս, եւ կային մարդիկ, որոնց, այսպես ասած, ձեռնտու չէր համայնքների միավորումը, եւ իրենք էլ էին նպաստում, որ բնակիչները վատ տրամադրվեն:

Սկզբում բնակիչները դժգոհում էին, որ մի տեղեկանքի համար ստիպված պետք է կենտրոն հասնեն, սակայն բոլոր վարչական ղեկավարներն ունեն իրենց կնիքները, եւ բնակիչը տեղում ստանում է այդ տեղեկանքը: Կար կարծիք, որ ես ավելի շատ ուշադրություն եմ դարձնելու Թումանյանի վրա՝ որպես այդ համայնքի նախկին ղեկավար, եւ իրենց բնակավայրերն անտեսվելու են: Բայց ժամանակի ընթացքում այդ կասկածն էլ փարատվեց, որովհետեւ ես շաբաթվա երեք օրն այդ բնակավայրերում եմ լինում, հետեւում կատարվող աշխատանքներին:

Դժվարություն է նաեւ այն, որ բնակչի կողմից չկա սրտացավություն սեփական հողի նկատմամբ, մարդիկ գերադասում են անտառը հատելով ու փայտ վաճառելով օրվա հացի գումար վաստակել, քան՝ մշակել տնամերձ հողամասերը, որոնք անտերության են մատնված: Պետք է փոխել մարդկանց մտածելակերպը, պետք է համայնքի յուրաքանչյուր բնակիչ համայնքին վերաբերվի իր տան նման: Համայնքը բնակիչնե՛րը պետք է ոտքի կանգնեցնեն, համայնքի ղեկավարն ընդամենը նրանց օգնողն է...

Ամենամեծ խոչընդոտը, որը կարծում եմ, մյուս համայնքներում եւս կա, սեփական եկամուտների հավաքագրումն է: Կան բնակիչներ, որոնք տասնյակ տարիներ հողի հարկ չեն վճարել. փորձում ենք մարդկանց բացատրել, որ եթե չվճարեն, ապա ծրագրեր էլ չենք կարող իրականացնել: Կարծես թե սայլը տեղից շարժվել է, ու կամաց-կամաց կհասնենք դրական արդյունքի:

- Ինչպիսի՞ն է համայնքի ղեկավար-վարչական ղեկավարներ համագործակցությունը:

- Յուրաքանչյուր բնակավայրի խնդիրների բարձրաձայնման եւ դրանց լուծման ուղղությամբ հետեւողականություն ցուցաբերելու հարցում շատ կարեւոր է տվյալ բնակավայրը ներկայացնող ավագանու անդամի եւ վարչական ղեկավարի դերը, որին վերջերս տրվեց նաեւ ավագանու նիստերին հարց բարձրացնելու հնարավորություն: Յուրաքանչյուր շաբաթ հավաքվում ենք, քննարկում արդեն արված եւ առաջիկայում նախատեսվող աշխատանքները: Ցավով եմ ուզում փաստել, որ որոշ վարչական ղեկավարներ անտարբերությամբ են վերաբերվում իրենց գործին. տարիներ շարունակ բնակավայրերում խնդիրները կուտակվել են նաեւ այսպիսի մոտեցման պատճառով:

Որպես համայնքապետ՝ խնդրել եմ բնակիչներին՝ ներկայացնել սրտացավ ու աշխատող մարդկանց, որոնք կփոխարինեն անպատասխանատու ղեկավարներին:

Ճիշտ չէր նաեւ նախկին համայնքապետերին որպես վարչական ղեկավարներ նշանակելը, որովհետեւ մարդիկ, որոնք դեմ էին վարչատարածքային բարեփոխումներին, այսօր չեն կարող նպաստել այդ գործընթացի հաջող իրականացմանը:

- Որպես բազմաբնակավայր համայնքի ղեկավարման փորձ ունեցող համայնքապետ, ինչպե՞ս կգնահատեք համայնքների խոշորացման գործընթացը:

- Համայնքների միավորման անհրաժեշտությունը վաղուց կար, եւ դրա իրականացումը նպաստում է հատկապես փոքր բնակավայրերի զարգացմանը: Ես չեմ կիսում այն կարծիքը, որ խոշորացման արդյունքում բնակավայրերը դատարկվում են, բնակիչները տուժում են դրանից: Պետք է հասկանալ եւ ընդունել այն իրողությունը, որ համայնքների միավորման արդյունքում փոխվում է միայն կառավարման ապարատը, եւ ընդհանրապես պետք չէ վախենալ այս գործընթացից:

ՀԱՍՄԻԿ ՔԵՐՈԲՅԱՆ

«ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՔԱՋԱՐԱՆ»

Հուլիսի 26-ին Քաջարանի համայնքապետարանի նիստերի դահլիճում կայացած ասուլիսի ժամանակ ՁԼՄ-ների ներկայացուցիչներին եւ շահագրգիռ կողմերին ներկայացվեցին Քաջարան համայնքում 300 բնակիչների եւ Քաջարանի ավագանու 10 անդամների հետ իրականացված հետազոտության արդյունքները: Հետազոտությունն անցկացվել է «Մասնակցային Քաջարան» ծրագրի շրջանակներում, որն իրականացվել է Կապանի քաղաքացիական-երիտասարդական կենտրոնի (Կապանի ՔԵԿ) նախաձեռնող թիմի կողմից: «Մասնակցային Քաջարանն» իրականացվել է «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի աջակցությամբ, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող ՀամաՏեղ ծրագրի շրջանակներում:

Սա ծրագրի ավարտին նախատեսված գործողություն էր: Այս կրկնակի հետազոտությունը նպատակ ուներ բացահայտելու նաեւ իրականացված ծրագրի արդյունավետությունը: Ըստ կազմակերպիչների ծրագիրն իր հիմնական նպատակին հասել է. բնակիչները տեղեկացված են ՏԻՄ-ից, համայնքի ավագանին գիտի իր լիազորությունները ու պարտականությունները, համայնքի երիտասարդները ակտիվ են եւ ներգրավված են ՏԻՄ-ի գործունեության մեջ:

ԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Ներկայացվել է «Տեղական տնտեսական զարգացում» ձեռնարկը

Ս.թ. հուլիսի 17-ին Վայոց ձորի Վայք եւ Զառիթափ խոշորացված համայնքների ներկայացուցիչները ծանոթացել են «Տեղական տնտեսական զարգացում» ձեռնարկին: Միջոցառմանը ներկա են գտնվել ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության (ՏԿԶՆ) տեղական ինքնակառավարման վարչության պետ Աշոտ Գիլոյանը եւ Գերմանիայի միջազգային զարգացման ընկերության (ԳՄՀԸ) ծրագրի համակարգող Արմեն Քեշիշյանը:

Վերջիններս ողջույնի խոսքով հանդես են եկել ԳՄՀԸ «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի «Տեղական տնտեսական զարգացման» բաղադրիչով իրականացվող՝ «Ծրագրային առաջարկների ձեւակերպման եւ լրացուցիչ միջոցների հայթայթման կարողությունների զարգացում» թեմայով վերապատրաստման դասընթացի ժամանակ:

Դասընթացին մասնակցել են նշյալ թեմաներով հետաքրքրված ու շահագրգիռ անձինք՝ գործարարներ, ՀԿ-ներ, ինչպես նաեւ Վայքի ու Զառիթափի համայնքապետարանների ներկայացուցիչներ:

Նման դասընթացներ անցկացվել եւ անցկացվելու են 18 խոշորացված համայնքների համար: Ի դեպ, 18 համայնք խմբավորվել են 10 խմբի մեջ, ինչպես, օրինակ՝ Վայքի եւ Զառիթափի դեպքում, որպեսզի հնարավորություն ստեղծվի համադրելու տարբեր համայնքների իրողությունները, հնարավորությունները, ռիսկերը, ինչպես նաեւ՝ համագործակցության ներուժը:

Հիշեցնենք, որ ԳՄՀԸ «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի ֆինանսական եւ խորհրդատվական աջակցությամբ պատրաստված եւ Վարազդատ Կարապետյանի մշակած «Տեղական տնտեսական զարգացում» ձեռնարկի շնորհանդեսը տեղի է ունեցել ս.թ. հունիսի 30-ին, Երեւանում:

Հարգելի ընթերցող,

Ի՞նչ եք մտածում ամեն անգամ «Համայնք-ՀամաՏեղ» թերթը բացելիս, ի՞նչ ակնկալիքներ ու սպասումներ ունեք, ինչի՞ մասին եք ցանկանում կարդալ, բայց չեք գտնում այստեղ: Թերթի մասին ձեր կարծիքը շատ կարեւոր է մեզ համար:

Գրեք մեզ հետեւյալ հասցեով՝

Երեւան, Երվանդ Քոչարի 20, 4-րդ հարկ **կամ** ***madamyan@cfoamail.am*** **էլ. փոստին:**

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Համայնք-ՀԱՄԱՏԵՂ» ամսաթերթը շարունակում է իր ընթերցողին ներկայացնել տեղական ինքնակառավարման՝ հայկական մոդելների մասին՝ Արեւիկ Հարությունյանի «Պանկուից մեր օրերը» եզակի աշխատության ուշագրավ էջերը:

Քաղաքային ինքնավարության վերածնունդը միջնադարում

IX-XI դարերում արաբական տիրապետությունից ազատագրված Հայաստանում՝ Բագրատունիների օրոք, այս դրությունը փոխվում է: Ակադեմիկոս Բ. Առաքելյանն այս ժամանակահատվածը քաղաքների համար ամփոփում է հետեւյալ կերպ. «9-րդ դարը հանդիսացել է գյուղից քաղաքի սահմանաբաժանման, իսկ 10-րդ դարը՝ Հայաստանում ֆեոդալական քաղաքի առաջացման ամենաբուռն ժամանակաշրջանը»: Իսկապես, երկրի անկախության վերականգնումը, հողատիրական խոշոր իշխանությունների գոյացումը, տնտեսական վերելքը, միջազգային տարանցիկ առեւտրի վերականգնումը եւ այս առեւտրի մեջ Հայաստանի խաղացած բացառիկ դերը, աշխատանքի հասարակական բաժանումը, որը դրսեւորվել է երկրագործությունից արհեստագործության եւ առեւտրի անջատումով, նպաստել են նոր քաղաքների առաջացմանը, քաղաքային կյանքի զարգացմանը եւ քաղաքային դասի ձեւավորմանը:

Ինչպե՞ս է առաջացել միջնադարյան քաղաքը: Ընդունված տեսակետի համաձայն՝ ամենատիպականը եղել է բերդավանքաղաք զարգացման ուղին: Վերաճելով գյուղաքաղաքի, ապա քաղաք է դարձել բերդի առջեւ փռված ավանը, որը պարսպապատվել է, իսկ բերդը վերածվել ներքին բերդի կամ միջնաբերդի: Բ. Առաքելյանի կարծիքով, եղել են նաեւ փոքր թվով քաղաքներ, որոնք առաջացել են բերդի հետ չկապված ավաններից, ինչպես եւ այն բնակավայրերից, որոնք գոյացել են երկրի այս կամ այն բնական հարստության օգտագործման հիման վրա:

Քաղաքները աճել են հիմնականում ի հաշիվ հողից զրկված եւ ճորտացման վտանգից դեպի քաղաքները փախչող գյուղացիության: Բնականաբար, ո՞ւր կարող էին փախչել շինականները, որպեսզի ազատվեին ճորտությունից կամ առնվազն, գոնե ազատ մնային փախուստի վայրում ծնված նրանց երեխաները:

Ինչպես երեւում է, հնագույն շրջանի քաղաքների անկումից հետո էլ քաղաքային բնակչության՝ «ըստ պայմանի քաղաքացեաց» իրավունքներն ու արտոնությունները միջնադարում պահպանվել են եւ արտացոլվել Մխիթար Գոշի «Դատաստանագրքում»: Հենվելով Հայաստանում գոյություն ունեցած հին կարգի վրա, Գոշը սահմանել է. «Արդ քաղաքացիք առաւել քան զգեղջուկս պատուիցին եւ գեղջկաց նմանապէս առաւել պատիւ լիցի քան բնակչաց ագարակի, սոյնպէս լիցի բերդի բնակչաց եւ աւանի, զի եւ կարգ առաջնոցն է մերոց թագաւորացն այդոքիկ»: Գոշի սահմանմամբ՝ քաղաքացուն շնորհված արտոնությունը միջնադարում տարածվել է նաեւ բերդի եւ ավանի բնակչության վրա, եւ ավանն իրավական տեսակետից հավասարեցվել է քաղաքին: Գոշը առեւտուրը թույլատրելի է համարում քաղաքներին, հավասարապես նաեւ ավաններին: Դարձյալ գյուղի մասին խոսք չկա: Այսպիսով, քաղաքների, բերդերի եւ ավանների բնակչությունը միջնադարում դարձյալ վայելել է որոշակի արտոնություններ, որոնք էլ գյուղական բնակչության համար խոշոր ձգողական ուժ են ստացել: Քաղաքի բնակիչը անմիջական ճորտական կախումից եղել է ազատ, ունեցել է տեղից տեղ շարժվելու կամ բնակության վայրը փոխելու իրավունք, ազատ կերպով կարող էր զբաղվել ոչ միայն արհեստներով, այլ նաեւ այնպիսի գործերով, որպիսիք գյուղերում չեն եղել, նա ազատ է եղել նաեւ հողատիրոջ օգտին կատարվող պարհակային պարտավորությունից: Այս ամենն, իհարկե, գրավել է շինականին:

Անիի պարիսպների ավերակներ: Հեղինակ՝ Ziegler175

Քաղաքային վարչության վերաբերյալ ամենավաղ տեղեկությունները վերաբերում են Դվինին, որը IX-X դարերում մերթ պետական ընդհանուր ենթակայության, մերթ ֆեոդալ տիրոջը պատկանող քաղաքի անկայուն վիճակ է ապրել, ինչը նպաստավոր է եղել քաղաքային ինքնավարության առաջացման համար: Մառը, ամփոփելով Անիի երկար տարիների պեղումների արդյունքները, հայտնել է այն կարծիքը, որ «Անիում առաջանում էր, թերեւս առաջացել էր ինքնուրույն քաղաքային կյանք, քաղաքային ավագանու գլխավորությամբ եւ օրենսդիր իշխանությամբ»: Անիի քաղաքային ինքնավարությամբ մարմինը համարվում է Անիի վիմագիր արձանագրությունների մեջ հաճախ հանդիպող «երիցանի»-ն, որն ըստ էության համարժեք է Մատթեոս Ուռհայեցու «ժամանակագրության» մեջ հանդիպող «ծերք քաղաքին»՝ ծերակույտ հասկացությանը: Ս. Երեմյանը, հղում կատարելով Արիստակես Լաստիվերտցուն, նույնպես մատնանշել է դեռեւս վերջին Բագրատունիների օրոք Անիում քաղաքային ավագանու խորհրդի գոյացման փաստի մասին՝ աղբյուրներում հայտնի «աւագք քաղաքին» կամ «գլխաւորք քաղաքին» անուններով: Ս. Եղիազարյանը հանդիպում է «Վարչական հաստատությունների մասին պատմական հետազոտություններ» աշխատության մեջ, հիմնվելով Ղեւոնդ Ալիշանի եւ Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» հաղորդածների վրա, նույնպես հավաստում է, որ Անին կառավարվել է պատրոնների կամ վերատեսուչների, տանուտերերի եւ ծերակույտի ձեռքով:

X-XI դարերում արհեստների եւ առեւտրի զարգացմանը զուգընթաց քաղաքների բնակչության թիվն աճել է: Արհեստագործական բազմազան ճյուղերի եւ ծավալուն առեւտրի շնորհիվ քաղաքներն աստիճանաբար դարձել են տնտեսական, առեւտրական եւ մշակութային խոշոր կենտրոններ: Պատմաբան Ս. Երեմյանի գնահատմամբ՝ «Հայաստանի քաղաքները X-XI դարերում իրենց զարգացման մակարդակով ետ չէին մնում արաբական խալիֆայության եւ բյուզանդական երկրների քաղաքներից ու խոշոր դեր էին խաղում թե՛ երկրի ներքին կյանքում, եւ թե՛ միջազգային տարանցիկ առեւտրի մեջ: Այդ դարաշրջանում քաղաքների ձեւավորումը եւ զարգացումը հասարակական-տնտեսական այն գլխավոր նախադրյալներից էին, որոնցով պայմանավորվեց հասարակության անցումը վաղ ֆեոդալական փուլից դեպի բարձր փուլը՝ զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանը»:

Պարզվում է, որ Հայաստանում IX-XI դարերում մինչեւ այդ գոյություն ունեցող երեք քաղաքներից բացի առաջացել եւ զարգացել են 42 քաղաք, 23 գյուղաքաղաք եւ շատ ավաններ, որոնցից մոտ երեսունը աղբյուրներում հիշատակված են որպես առավել խոշոր: Քաղաքային վարչության եւ ինքնավարության առկայությունը միջնադարյան Հայաստանում առաջինը փաստել են Ն. Մառը եւ Հ. Օրբելին: Հ. Մանանդյանը, բերելով Մառի կարծիքը «երիցանու» մասին, նշում է, որ Դվինի «քաղաքային ավագանին» հիշատակված է նաեւ IX-X դարերի արաբական աղբյուրներում՝ Իբն Մասլամայի (7-րդ դար) արշավանքի կապակցությամբ: Այսուհանդերձ Մանանդյանը չժխտելով բերված վկայությունների կարեւորությունը, հավանական է համարում, որ Բագրատունյաց դարաշրջանի քաղաքները մեծ մասամբ եղել են ֆեոդալների նստավայր, գտնվել են ֆեոդալ տեր-սենյորների իշխանության ներքո եւ ունեցել «սենյորիալ» կարգեր:

Մանանդյանի տեսակետի համաձայն այս քաղաքները կառավարվում էին պաշտոնական անձանց կողմից, որոնց նշանակում էին քաղաքների տերերը, Բագրատունի թագավորները եւ մյուս խոշոր սենյորները, եւ որ IX-X դարերի քաղաքներում դեռեւս ինքնավարություն չի եղել: Այսպիսով, Մանանդյանը չի ժխտում քաղաքային վարչական պաշտոնյաների առկայությունը, բայց գտնում է, որ դրանք սոսկ սենյորների կողմից նշանակվող պաշտոնյաներ էին:

Սակայն պատմագիտության մեջ կա մեկ այլ կարծիք, որի համաձայն Մանանդյանի տեսակետը հիմնականում ճիշտ է, որքանով այն վերաբերում է Բագրատունյաց թագավորության շրջանին (IX դարի վերջերից մինչեւ XI դարի 40-ական թթ.) եւ այդ թագավորության սահմաններում գտնվող քաղաքներին: Մինչդեռ քաղաքային վարչության եւ ինքնավարության սկզբնավորումը դիտվում է հենց այդ դարաշրջանում, մասնավորապես այն քաղաքներում, որոնք չեն պատկանել ֆեոդալ տիրոջը եւ եղել են պետական ընդհանուր ենթակայության քաղաքներ: Պետական ընդհանուր ենթակայության քաղաքներում շատ ավելի նպաստավոր հող կար քաղաքային ինքնավարության զարգացման համար: Այդպիսիներից է Բյուզանդական կայսրության սահմաններում գտնվող Արծն քաղաքը, որը դեռեւս X դարի երկրորդ կեսին եւ XI դարի առաջին կեսին դարձել է ինքնավար համայնք եւ ունեցել իր սեփական աշխարհագրը:

Քաղաքներում ձեւավորվել եւ զարգացել է քաղաքային դասը, որը ձգտել է քաղաքային իշխանության մեջ իր շահերը պաշտպանված տեսնել: Երկրի տնտեսության մեջ եւ հատկապես քաղաքային կյանքում արհեստագործության ու առեւտրի դերի բարձրացումը անխուսափելիորեն բարձրացրել է քաղաքային դասի դերն ու տեղը այն քաղաքներում, որոնք միանձնյա կերպով կառավարվել են քաղաքի տեր հանդիսացող այս կամ այն իշխանի կողմից: Քաղաքային դասը հաճախ է պայքարել քաղաքի միանձնյա իշխանի դեմ: Այդ պայքարը մղվել է քաղաքի ներքին կյանքի կառավարմանը մասնակցելու, հողատերերի կամայականությունները զսպելու եւ քաղաքային ինքնավարություն ստեղծելու համար: Ակադեմիկոս Երեմյանն այդ ընթացքը մատնանշել է հետեւյալ կերպ. «Մանավանդ քաղաքային դասի վերնախավը պայքարի մեջ էր մտել քաղաքի ֆեոդալ տիրոջ կամ սենյորի հետ՝ ընդդեմ նրա անբաժան տիրապետության եւ իշխանության ու տակավ առ տակավ ձեռք էր բերում քաղաքային վարչության մեջ մասնակցության իրավունք: Իշխանի գլխավորած վարչությունը քայլեր էր կատարում քաղաքային ինքնավարություն դառնալու ուղղությամբ: Քաղաքային վարչությունն աստիճանաբար ընդարձակվում էր, ուստի նրա հետագա զարգացումը, բնականաբար, տանում էր դեպի ինքնավարության առաջացում, որը տարբեր քաղաքներում ունենում էր տարբեր դրսեւորում՝ սկսած քաղաքի տեր ֆեոդալի իշխանության ներքո ձեռք բերված մասնակի ինքնավարությունից մինչեւ քաղաքային ինքնավար համայնքի ձեւավորում»: Արդյունքում մի շարք քաղաքներում ստեղծվել են քաղաքային ինքնավարության մարմիններ՝ քաղաքային խորհուրդներ կամ քաղաքային ավագանի:

Ըստ «Պանկուից մեր օրերը» գրքի Հատվածները տպագրվում են հեղինակի համաձայնությամբ:

«ՀԱՄԱՅՆՔ-ՀԱՄԱՏԵՂ» ամսաթերթ
Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ
Գրանցման վկայական՝ թիվ 03Ա063471, տրված՝ 06. 02. 2004 թ.

USAID FROM THE AMERICAN PEOPLE

Թերթը հրատարակվում է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության օժանդակությամբ իրականացվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀԱՄԱՏԵՂ) ծրագրի շրջանակներում: Այստեղ արտահայտված տեսակետները միմիայն հեղինակներինն են եւ պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՎԱՀԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՎԱՀՐԱՄ ՇԱՀԲԱԶՅԱՆ
ԱԲՐԱՀԱՄ ԱՐՏԱՇԵՍՅԱՆ
ՆՎԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԲՈՐԻՍ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
ՀՌԻՓՍԻՄԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԴԱՎԻԹ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ՔՆԱՐԻԿ ԱՅՎԱԶՈՎԱ
ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Թողարկման պատասխանատու՝ Խմբագիր
ԱՐԵՎՀԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Մեր հասցեն՝
Երեւան, Երվանդ Քոչարի 20, 4-րդ հարկ
Հեռախոս՝ 011 5313 97, 011 5313 98
Էլ.փոստ՝ info@cfoamail.am
Կայք՝ http://cfoa.am/

Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում, ք.Երեւան, Արշակունյաց պող. 2
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ, տպաքանակը՝ 2000 օրինակ:
Թերթը տարածվում է անվճար: